HY

Մատնահետքեր եվ Eurodac

Տեղեկատվություն երրորդ երկրների քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար, ովքեր անօրինական կերպով բնակվում են անդամ պետությունում՝ համաձայն թիվ 603/2013 կանոնակարգի (ԵՄ) 29(3)-րդ հոդվածի

Եթե հայտնաբերվում է, որ անօրինական կերպով բնակվում եք դուբլինյան երկրում[1)], ապա իշխանությունները կարող են վերցնել Ձեր մատնահետքերը և հանձնել մատնահետքերի տվյալների բազային, որ կոչվում է «Eurodac»: Դա կատարվում է միայն այն նպատակով, որ պարզվի, թե արդյոք նախկինում դիմել եք ապաստանի համար: Ձեր մատնահետքերի տվյալները չեն պահվի Eurodac տվյալների բազայում, սակայն եթե նախկինում դիմել եք ապաստանի համար այլ երկրում, Ձեզ կարող են ետ ուղարկել տվյալ երկիր:

Եթե Ձեր մատնահետքերը հստակ չլինեն, այդ թվում եթե դիտավորյալ վնասած լինեք Ձեր մատները, ապա մատնահետքերը կարող են հետագայում կրկին վերցվել:

Eurodac-ը կառավարվում է Եվրոպական Միության eu-LISA կոչվող գործակալության կողմից: Ձեր տվյալները կարող են օգտագործվել միայն օրենքով սահմանված նպատակներով: Ձեր տվյալները կստանա միայն Eurodac կենտրոնական համակարգը: Եթե ապագայում ապաստան խնդրեք այլ դուբլինյան երկրում, ապա Ձեր մատնահետքերը կրկին կվերցվեն՝ Eurodac փոխանցելու նպատակով: Eurodac-ում պահված տվյալները չեն փոխանցվի ԵՄ-ից կամ ասոցացված պետություններից դուրս որևէ այլ պետության կամ կազմակերպության:

1) **Այն տարածվում է ողջ Եվրոպական Միության վրա (Ավստրիա, Բելգիա, Բուլղարիա, Գերմանիա, Դանիա, Էստոնիա, Իռլանդիա, Իսպանիա, Իտալիա, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Լյուքսեմբուրգ, Խորվաթիա, Կիպրոս, Հունաստան, Հունգարիա, Մալթա, Նիդերլանդներ, Շվեդիա, Չեխիայի Հանրապետություն, Պորտուգալիա, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, ինչպես նաև Դուբլինի կանոնակարգին «ասոցացված» 4 երկրների վրա (Նորվեգիա, Իսլանդիա, Շվեյցարիա և Լիխտենշտեյն):**

© Եվրոպական Միություն 2014
Վերարտադրությունը թույլատրված է: Ցանկացած նպատակով օգտագործման կամ առանձին լուսանկարների վերարտադրության համար՝ պետք է անմիջականորեն վերցնել հեղինակային իրավունքի սեփականատերերի թույլտվությունը:

Կոնտակտային տվյալներ

Eurodac-ի վերահսկողի և նրա ներկայացուցչի ինքնությունը,
Կոնտակտային տվյալներ՝
Ոստիկանական խորհուրդ և Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն

Վերահսկողի գրասենյակի կոնտակտային տվյալները,
Ազգային ոստիկանական խորհուրդ
Poliisihallitus, PL 1000 (Vuorimiehentie 3),
02151 Espoo
+358 295 480 181
kirjaamo.poliisihallitus@poliisi.fi

Ֆինլանդիայի ներգաղթի ծառայություն
Maahanmuuttovirasto, PL 10,
00086 Maahanmuuttovirasto
Հեռախոսահամար՝ +358 295 430 431 (կոմուտատոր)
migri@migri.fi, www.migri.fi

Եթե ցանկանում եք հասանելիություն ունենալ Eurodac-ում գրանցված ձեր անձնական տվյալներին, կարող եք անձամբ հայց ներկայացնել ոստիկանական բաժանմունք: Կպահանջվի հաստատել ձեր ինքնությունը: Խորհուրդ ենք տալիս դիմել այն ոստիկանական բաժանմունք, որտեղ ներկայացրել եք ապաստանի վերաբերյալ դիմումը: Ոստիկանական բաժանմունքների կոնտակտային տվյալները կարող եք գտնել ոստիկանության կայքում՝ poliisi.fi:

Եթե մեր իշխանությունները գտնեն, որ միջազգային պաշտպանության համար պետք է դիմեիք այլ երկրում, և որը պետք է պատասխանատու լիներ Ձեր դիմումը քննելու հարցում, ապա Ձեզ կտրամադրվի առավել մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչ ընթացակարգ է հաջորդելու և այն ինչպիսի ազդեցություն կունենա Ձեր և Ձեր իրավունքների վրա:

Ազգային վերահսկողության (Տվյալների պաշտպանության) մարմնի տվյալները:
Տվյալների պաշտպանության օմբուդսմենի գրասենյակ
Tietosuojavaltuutetun toimisto
Այցելության հասցե՝
Lintulahdenkuja 4, 00530 Helsinki
Փոստային հասցե՝
PL 800, 00531 Helsinki
Կոմուտատոր՝ +358 29 566 6700
Հեռախոսային խորհրդատվություն մասնավոր անձանց համար՝
+358 29 566 6777
Երեքշաբթի–հինգշաբթի 9.00–11.00
tietosuoja@om.fi, www.tietosuoja.fi

30.1.2024 - armenia